Մրցույթի հայտարարություն

ՀՀ Արմավիրի մարզի «Մրգաստանի Կ.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի
կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը բնօրինակի հետ.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը բնօրինակի հետ.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են «Մրգաստանի Կ.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում 2022 թվականի մարտի 28-ից մինչև ապրիլի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի ապրիլի 29-ին՝ ժամը 15:00-ին, «Մրգաստանի Կ.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ Արմավիրի մարզ, գ. Մրգաստան, 1-ին փ, 15 շենք:

Տեղեկությունների համար դիմել

Հեռախոս՝ 093-55-56-21 Էլ. փոստ՝ mrgastan@mail.ru: